

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

**ПРОБЛЕМЫ НАЦИОНАЛЬНОЙ
БЕЗОПАСНОСТИ
В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ И
ИНТЕГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ
(междисциплинарные аспекты)**

**МАТЕРИАЛЫ МЕЖДУНАРОДНОГО
НАУЧНОГО ФОРУМА
3–5 ноября 2016г.**

*К 25-летию Независимости Республики Армения и
20-летию Российско-Армянского университета*

**ЕРЕВАН
Издательство РАУ
2016**

УДК 351/354:06

ББК 66.4

П 781

*Печатается по решению
Ученого и Редакционно-издательского советов РАУ*

Редакционная коллегия:

Дарбинян А.Р. д.э.н., профессор, член-корреспондент НАН РА (председатель); Аветисян П.С. д.филол.н., профессор (заместитель председателя); Аветисян С.С., д.юр.н., профессор; Берберян А.С., д.псих.н., профессор; Енгоян А.П., д.полит.н., доцент; Манукян А.С., д. ист. н., профессор; Оганесян С.Г., д. филос. н., профессор; Погосян Г.А., д. соц. н., профессор, академик НАН РА; Саркисян О.Л. к. филос. н., доцент (ответственный редактор).

П 781 Проблемы национальной безопасности в условиях глобализации и интеграционных процессов (междисциплинарные аспекты) /
Материалы международного научного форума. – Ер., Изд-во РАУ, 2016. С. 392.

Сборник печатается по материалам Международного научно-практического форума, проведенного в Российско-Армянском Университете. Публикация сборника осуществляется также в соответствии с требованиями ВАК РА к сборникам научных трудов.

УДК 351/354:06
ББК 66.4

ISBN 978-9939-67-161-1

© Издательство РАУ, 2016

ԱԶԳ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ԳԼՈՒԲԱԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Գ.Է. Միմոնյան

gurgensimonyan4@gmail.com

Արդի քաղաքական գիտությունը, ուսումնասիրելով պետական և ազգային շահերի գուգամիտման գործընթացը, կարևորում է պետության ինստիտուտի էվոլյուցիան և դրա շրջանակում քաղաքացիական հասարակության ձևավորման մշակույթը: Պոլիտոգենեզի գործընթացի վրա ազդեցություն են ունենում և՛ ներքին, և՛ արտաքին գործոններ: Վերջիններիս ազդեցության հետևանքով, միջազգային հարաբերություններում ստեղծվում են բարենպաստ պայմաններ նոր պետությունների առաջացման համար:

Հիմնաբառեր՝ Ազգ, պետություն, արդիականացում, շահեր, ինքնիշխանություն.

2011-ին Հարավային Սուդանի անկախացմամբ ՄԱԿ անդամ երկրների թիվը հասավ 193-ի, սակայն ներկայիս չճանաչված պետությունների առկայությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ թիվը աճելու միտում ունի [8]: Հաշվի առնելով 1945 թ. ՄԱԿ անդամ երկրների թիվը, միջազգային հարաբերություններում տեղի է ունենում դերակատարների «մանրացման» գործընթաց: Համաձայն ՌԻ. Ալտերմատի ուսումնասիրության՝ ոչ բոլոր ազգերն են ձգտում կառուցել միջազգային իրավունքով ճանաչված ազգ-պետություն և ամեն ազգ-պետություն չէ, որ կազմավորվում է բացառապես մեկ ազգի կողմից [1, 67]: Ալտերմատի բնորոշմամբ եզակի դեպք է, երբ պետականությունը կառուցվում է մեկ ազգ մեկ պետություն սկզբունքով: Վերոգրյալի եզակի օրինակ է Հայաստանի Հանրապետությունը, այն բառի ուղիղ իմաստով ազգ-պետություն է:

XX դարի 50–60-ական թթ. ձևավորված արդիականացման տեսության տեսաբանները՝ հենվելով Ս. Վեբերի, Է. Դյուրգեյմի, Ֆ. թյունիսի էվրոպական քաղաքակրթության արդիականացման մշակութային

հիմքերի վրա հիմնավորեցին պետության ծագմանը և արդիականացման նպաստող հետևյալ հիմնական սկզբունքների ընդհանրությունը՝ մշակութային վերելքի ձգտող և ապրող ազգ, արտաքին կամ ներքին սպառնալիքներից անկախ մնալու կամք, սոցիալական բարդացող հարաբերություններ [5, 272]: Ելակետ ընդունելով այս մոտեցումը փաստենք, որ պետությունը որպես քաղաքական համարգի գերակա ինստիտուտ, ունի հզոր գործիքակազմ, որի միջոցով. «...որոշակի քաղաքակրթական սկիզբ ունեցող ինքնիշխան ազգերը, ընդհանուր բարիք արարելով, դրսևորում են քաղաքական կամք՝ սեփական տեսակը արտաքին և ներքին մարտահրավերներից անվտանգ պահպանելու և բնականոն արդիականացնելու համար» [3, 321]:

Քաղաքական ժամանակի և տարածության մեջ ազգ-պետության արժեքային համակարգը ենթարկվեց էվոլուցիայի՝ ցանկանալով հաղթահարել XX դարի 50-60 թթ.-ին ձևավորված քաղաքական արդիականացման «այսբերգները» [6, 195]: XX դարի 60-70-ականների և առավել ևս 80-90-ականների արդիականացման փորձը ցույց տվեց, որ նորանկախացած երկրները հայտնվում են քաղաքական զարգացման ճգնաժամերի (բաշխման, մասնակցության, շարժունակության, նույնականացման և լեգիտիմության) մեջ: Դրանց հաղթահարման նպատակով նորանկախ և հետամնաց երկրների զարգացման համար անհրաժեշտություն առաջացավ իրականացնել բազմավեկտոր բարեփոխումներ, որոնք հիմնված կլինեն հարահոս զարգացած երկրների քաղաքական փորձի վրա: Ուստի արդիականացումը իր սոցիո և էթնոմշակութային արժեքային կողմնորոշիչներով և խաղային բնույթով քաղաքական համակարգի, ժողովրդավարական ինստիտուտների որակական զարգացումը ապահովող գործընթաց է:

Քաղաքական արդիականացումը իր իմաստով բազմաբովանդակ է, այն ներառում է ժողովրդավարացման երեք ալիքները՝ ընդգրկելով հանրային կյանքի բոլոր ոլորտները, ինքնիշխան պետության և քաղաքացիական հասարակության կայացման գործընթացից մինչև անցում հետարդիական հասարակության [7, 68-75]: Սառը պատերազմի ավարտից հետո քաղաքական արդիականացումը դարձավ ժամանակի հրամայական, որը ենթադրում էր քաղաքական փոփոխության, կայունության, անվտանգության և լեգիտիմության փոխապայմանավորվածությունների բազմաչափություն և առկա մարտահրավերներին համահունչ ազգային, տարածաշրջանային և գլոբալ շահերի արդիականացում:

Ինչպես տեսնում ենք քաղաքական արդիականացումը գծային գործընթաց չէ, նրա ամեն փուլ որոշակիորեն կերպափոխում է մարդ-

կանց աշխարհայացքը և նորովի շահադրդում նրանց վարքը: Ուստի քաղաքական արդիականացումը, որպես ժողովրդավարացման շարժընթաց, բազմաբնույթ դիտարկումների պատճառ է դառնում գլոբալացման և տեղեկատվական հասարակությունների կայացման գործընթացում. «Հետարդիական հասարակարգի կայացումը մերժում է բյուրոկրատացումը և կենտրոնականացումը՝ ուղղորդելով մարդկանց անհատական անկախության և ինքնաիրացման: Սա ունիվերսալ համակարգ չէ, առանձին երկրների լիդերները և պատահական իրողությունները կարող են ներմուծել զգալի փոփոխություններ: Բացի դա արդիականացմամբ ներմուծված փոփոխությունները անուղղելի չեն լինում: Անողորք տնտեսական փորձությունները կարող են բերել շրջադարձի, ինչպես դա եղավ «Մեծ» ընկճախտի տարիներին Իտալիայում, Գերմանիայում, Իսպանիայում և Ճապոնիայում կամ 1990-ական թթ. հետխորհրդային երկրներում» [2, 165]:

Ուստի քաղաքական արդիականացման հիմնական առանձնահատկությունը քաղաքական կամքի դրսևորումն է՝ արդիականացնել ազգային շահը՝ ներդաշնակելով ավանդական և արդիական արժեհամակարգերը: Փաստորեն միայն այս պարագայում է հնարավոր ապահովելով մրցունակ մասնակցություն, ազգային հիմնախնդիրները բարձրաձայնել և գլոբալ, և գլոլոկալ քաղաքական գործընթացներում: Այլապես՝ պահանջարկված չլինելու դեպքում, ժողովրդավարական արժեքների ներմուծումն ու համաշխարհային ընդունված կարգի տեղայնացումը կարող է երկիրը նետել հարահոս հեղափոխությունների հորձանուտ, ինչպես որ եղավ Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի որոշ երկրներում «Արաբական գարնան» հետևանքով: Ակնհայտ է, որ քաղաքական արդիականացումը տեղի է ունենում ոչ միայն արևմտյան ձևաչափի, այլ սոցիոմշակութային և էթնոմշակութային արժեքների գուգամիտման շնորհիվ:

Ելակետային այս մոտեցման օգնությամբ փաստենք, որ նպատակահարմար է քաղաքական արդիականացումը դիտարկել որպես.

- **Տնտեսական առաջընթացի նախապայման:**
- **Հետարդյունաբերական հասարակություններին բնորոշ քաղաքականություն:** Վերջինս ռացիոնալացնում է դերակատարների վարքաբանությունը և ապակենտրոնացնում կառավարումը:
- **Փոփոխությունների գործընթաց, որը հիմնավորում է զարգացած երկրների՝ որպես «ընդօրինակման աղբյուրներ» հանդես գալու հանգամանքը, քանի որ վերջիններս իրենց «բարեփոխումներ**

վերևից» խաղի կանոններով ի ցույց են դնում քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման ուղիները:

- Ազգ-պետության ցանցային գործունեություն, համաձայն որի՝ քաղաքական կյանքի կազմակերպման այս ձևը, ինչպես նաև քաղաքական գործառույթների իրականացումը, փոխալսմանավորված են ազգային ինքնորոշման և ինքնիշխանության սկզբունքների վրա արդիականացող արժեքների առկայությամբ:
- Վարչական և իրավական համակարգի կատարելագործում, որը սերտորեն կապված լինելով ազգ-պետության բնականոն արդիականացման գործընթացներն՝ հարստանում է քաղաքական ժամանակի և տարածության պահանջներին համապատասխան:
- Զանգվածային շարժունակություն և մասնակցություն, որը պայմանավորված է քաղաքացիների վարքաբանության և դերակատարումների մեջ առկա այլընտրանքային հնարավորությունների օգտագործման հետ:

Պատմությունը ցույց է տալիս, որ էթնոքաղաքականությունը եղել և մնում է գերակա սկզբունք՝ ներառելով մնացյալ բոլոր հարաբերությունները, և դա բնական է, քանի որ մարդու անձնական շահերը նույնականանում են սեփական մարդաբանական և մշակութային տիպին հատուկ հանրային շահերի հետ: Ռիստի ակնհայտ է, որ ազգային յուրահատկություններով պայմանավորված աշխարհընկալումն իր ասոցիատիվ ենթագիտակցությամբ բազմազան է ճիշտ այնքանով, որքանով բազմազան է Երկրի էթնոքաղաքակրթական բնաշխարհը: Հանրագումարելով նշենք, որ հետարդիական հասարակարգի ձևավորման շեմին քաղաքակրթական բազմազանության քաղաքական ակտիվության դրսևորումները նոր մարտահրավերների առիթ են դառնալու ազգ-պետությունների համար, որոնք հաղթահարելու համար անհրաժեշտ է լինելու ազգի համախմբվածության պայմաններում վարել ճկուն և գրագետ քաղաքականություն՝ բախման գաղափարախոսությունից երկխոսության անցում կատարելու համար:

Արտաքին քաղաքականության ներկա միտումները գալիս են ապացուցելու, որ հնարավոր է ապագա քաղաքական քարտեզը բաժանվի ազգ-պետությունների միջև, որոնք միմյանց հետ փոխշաղկապված կլինեն համամոլորակային հաղորդակցման միջոցներով, տեղեկատվական և կրթական համակարգերով, տնտեսության ստանդարտացված կարգավորիչ մեխանիզմներով: Այդպիսի քաղաքական իրավիճակում ազգ-պետությունը կսահմանափակվի տեղային իրավարարության և կարգի պահպանման գործառույթներով, իսկ գերակա դերակա-

տարություն կունենան ազգերը՝ պայմանավորված քաղաքակրթական հատկանիշներով, մարդաբանական տեսակով և հավակնություններով: Համաձայն թոֆլերյան «պրակտոպիայի» հեղափոխական հարստության ապագան ամբողջ աշխարհում չի որոշվում միայն շուկաների փոխհարաբերության միջոցով: Շուկան միակողմանի չի կարող որոշել, թե ով ինչ պետք է արտադրի, իսկ ով ինչ պետք է ստանա: Հարստությունը միշտ որոշվում է իշխանության, մշակույթի, քաղաքականության և պետության միջոցով. «Ազգերը միշտ էլ գլխավոր դերակատարներ են եղել համաշխարհային թատերաբեմում» [4, 528]: Սակայն այդ ամենի հետ մեկտեղ վերլուծաբանը գտնում է, որ ինչքան էլ պետությունները համառ պայքար մղեն միմյանց դեմ՝ «ազգերի խաղատախտակում», միևնույն է, նրանք բոլորն էլ տանուլ են տալու, քանի որ փոխվում են խաղի կանոնները և մեծ տերություններն ավելի ու ավելի են դադարում «մեծ» լինելուց. «Պատճառն այն է, որ ազգերն ու պետությունները այլևս նոր «մեթախաղի» միակ կարևոր խաղացողները չեն. խաղը բաղկացած է բազմազան, ավելի մասնավոր խաղերից, որոնք իրենց հերթին ինտերակտիվ են և խաղարկվում են համատեղ: Մեկ հարթության վրա գտնվում է նեոշախմատը, մեկ այլում՝ նեոպոկերը, նեոնարդին և այլն: Խաղացողները մրցում են ոչ գծային կանոններով, փոխվում են ամեն քայլից հետո (կամ քայլի ընթացքում)» [4, 529]: Սա մեկ անգամ ևս ընդգծում է, որ ազգային նրբերանգն ու քաղաքակրթական քաղաքականությունը շարունակելու են գերակա լինել նախասիրությունների և «Ես»-ի նույնականացման համատեքստում, սակայն համագործակցային և հաղորդակցային ցանցերի բազմազանության պայմաններում մշակութային երկխոսությունն ու բախումը գնալով մաշելու են խնդիրահարույց ընկալումների սուր անկյունները՝ հարահոս արդիականացման միջոցով կերպափոխելով էթնոքաղաքակրթական արժեհամակարգը: Անդրազգային կորպորացիաները վաղուց խաղում են բազմազգ շախմատ միջազգային թատերաբեմում՝ ձեռք բերելով անհամաչափ ազդեցություն: Այսօր խոշորագույն բազմազգ կորպորացիաները և ֆինանսական ինստիտուտները սեփական խաղատախտակի վրա տեղաշարժում են ֆիգուրներ՝ դառնալով ավելի ու ավելի նվազ հաշվետու այն երկրներին, որտեղից որ նրանք ծագել են: Ուստի վերահսկման և համախմբման միակ լեգիտիմ միջոցը մնում է մշակույթը, ազգային համերաշխությունը: Հնարավոր է, որ տեղի է ունենում ազգ-պետության ինքնիշխանության երոզիա, սակայն ազգային մշակույթի ինքնիշխանության ու բնական արեալի անձեռնամխելի իրողությունը անվիճարկելի է: Պետական ապարատի գործառույթները երբեք չեն

անհետանա, քանի որ ազգային անվտանգության հիմնախնդրից էլնելով, դրանց առկայության պահանջարկը միշտ արդիական է լինելու, սակայն դրանց պատվիրակումն ու իրավասությունների տեղաշարժն անխուսափելի է հետարդիական հասարակարգում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. *Альтерматт У.* Этнонационализм в Европе. М.: Российск. Гос. Гуманит. Ун-т, 2000, 367 с.
2. *Иноземцев В.Л.* Демократия и модернизация: к дискуссии о вызовах XXI века. Центр исследования постиндустриального общества. М. Изд-во Европа. 2010, 318 с.
3. *Смит. Э.* Национализм и модернизация: Критический обзор современных теорий наций и национализма. Пер. с англ, А.В. Смирнова, Ю.В. Филиппова, Э.С. Загашвили, И. Окуновой. М.: Праксис. 2004. 464 с.
4. *Тоффлер Э.* Революционное богатство. М.: АСТ, 2008, 569 с.
5. *Хабермас Ю.* Политические работы. Сост. А. В. Денежкина; Пер. С нем. Б. М. Скуратова. М.: Праксис, 2005, 368 с.
6. *Хантингтон С.* Политический порядок в меняющихся обществах. М.: Прогресс-Традиция, 2004, 480 с.
7. *Хантингтон С.* Третья волна. Демократизация в конце XX века. Пер. с англ. М.: РОССПЭН, 2003, 368 с.
8. Рост численности членов ООН с 1945 года.
<http://www.un.org/ru/sections/member-states/growth-united-nations-membership-1945-present/index.html>

МОДЕРНИЗАЦИЯ НАЦИИ-ГОСУДАРСТВА В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ

Г.Э. Симонян

АННОТАЦИЯ

Современная политическая наука, изучая процесс конвергенции национальных и государственных интересов, подчеркивает важность эволюции государственного института и, в рамках этого, культуру формирования гражданского общества. На процесс политогенеза влияют как внутренние, так и внешние факторы. Вследствие влияния последних, в международных отношениях часто создаются благоприятные условия для возникновения новых государств.

Ключевые слова: нация, государство, модернизация, интересы, суверенитет.

MODERNIZATION OF THE NATION-STATE IN THE PROCESS OF GLOBALIZATION

G.E. Simonyan

ABSTRACT

The modern political science, studying the process of convergence of national and state interests, emphasizes the importance of evolution state institute and, as part of this, the culture of the formation of civil society. In the process of politogenesis affect both internal and external factors. Due to of those factors influence, in international relations are often created favorable conditions of the emergence of a new State.

Keywords: nation, state, modernization, interests, sovereignty.